<<ՀՀ Արագածոտնի մարզի Ցամաքասարի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրինությունը հայտարարում է մրցույթ ֆիզկուլտուրայի (18 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1.դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

2.բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)(միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորման անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում ՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ),

3.անձը հաստատող փաստաթուղթ,

4.<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

5.ինքանկենսագրություն(Ձև 5),

6.այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7.ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,

8.հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9.որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝ հավաստող փաստաթուղթ:

10.հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լենելու դեպքում).

11.<<Հանրակրթության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի(առկայության դեպքում նաև ՝ 2-րդ կետի) պահանջվող համապատասխան փաստաթուղթ.

12.<<Հանրակրթության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք ՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից.

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են

թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հունվարի 13-ից մինչև հունվարի 26-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հունվարի 29-ին ՝ ժամը՝ 13:00-ին ՀՀ Արագածոտնի մարզի Ցամաքասարի հիմնական դպրոցում. հասցեն՝ Արագածոտնի մարզ, գ. Ցամաքասար, 6-րդ փողոց, 6-րդ փակուղի., շենք 2:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 098 08-86-28 հեռախոսահամարով: